



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

G. pliz h. G. p. 7. 1907  
S. 1907. 1907

491.99-8  
U-19

1907

ԳՐԵԼ ԵՒ ԿԱՐԳԱԼ

37

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶԻՈՎ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Մեծերի եւ փոքրերի համար  
Մեծերի համար ԽՐԵՒ ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻՉ.

ՍՈՒԱՋԻՆ ՏԱՐԻ

Կազմեց Ս. ԱԴԱՄԵԱՆՑ

ԱԼԷԻՍԱՆԴՐԱՊՕԼ

Տպարան Դեղրգ Ս. Սանդիկանցի

1907

91.99-8  
2-19

Արևիկ Հրատեղի Գրադրոջ.

100-5-10

199-8  
19

17 հոյ. 1907թ  
Երևան.

ԳՐԵԼ ԵՒ ԿԱՐԴԱԼ

# Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Ջ Ի Ո Վ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՅՐԲԵՆԱՐԱՆ

Պատկերազարդումը և մեծ թվով փորձերով համարված  
պատկերազարդումը և մեծ թվով փորձերով համարված

մեծերի եւ փոքրերի համար

Մեծերի համար Իրենի Ինքնուսուծիչ.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Կազմեց Ա. ԱԴԱՄԵԱՆՑ

ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՈԼ

Տպարան Գեորգ Ա. Սանյուկանցի

1907

01. 2013

7698

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ.

Նախազարգացման կազմած ձևն ու եղանակը հեղինակի սեպհականությունն են կազմելու:




3  
39

Form with seven rows of horizontal lines. The first, third, fourth, fifth, and sixth rows are filled with diagonal hatching. The second and seventh rows are empty.



1.



ա.....



լ.....




ալ. ա. լ.

2.




մ..




ամ. ալ. ա. լ. մ.

ա. լ. մ.

3.



ի.....




իմ. ամ. ալ. մ. ի.

4.



ս.....



աս. իմ. ամ. ալ. ի. ս.

ա. լ. մ. ի. ս.

5.



Ե.

Ես. Ել. Եմ. աս. իմ. ամ. ալ. ս. Ե.

6.



Է.

Էլ. իմ. Ես. ամ. Ել. աս. Եմ. ալ. Ե. Է.

ա. Լ. մ. ի. ս. Ե. Է.

7.



Գ.

Եղ. Էլ. ամ. Ես. իմ. Ել. աս. Եմ. ալ. Է. Գ.

8.



Ժ.

Իժ. Եղ. ամ. Էլ. իմ. Ես. Եմ. ալ. Ել. աս. Գ. Ժ.

ա. Լ. մ. ի. ս. Ե. Է. Գ. Ժ.

9.



Չ. Շ

էջ. ես. ալ. եմ. էլ: իժ. աս. եզ. ամ. ել. իմ. ժ. շ.

10.



Ս..... Տ

են. եզ. ալ. էջ. ամ. իժ. էլ. եմ. աս. ել. իմ. ես. շ. ն.

ա. լ. մ. ի. ս. ե. է. զ. ժ. շ. ն.

11.



սա. զի. Ա 

ա-սա. ա-զի. ե-զի. ա-սի. ա-մի. է-լի. Ա-նի:

12.

լա. լէ. մի. լի. զի. նա. սա.  
լա-լա. լէ-լէ. մի-մի. սա-մի. սա-լի. սա-զի. ժա-մի  
շա-մի. մա-սի. շա-լի. Ան-նա:

13.

Ս  Մ 

Սա եզ է: Մի լէ-լէ ա-սա: Ան-նա, սա ե-զի սա-  
մի է: Ա-սա ա-մի. նա էլ ա-սի. ես էլ: Մի էջ:

Ա. Ս. Մ.





14.

Լ և Լ

լալ. շիշ. Միս. ժամ. սալ. շալ. միս. սիմ. զիլ. շիլ.  
մազ. մաս. նազ. սազ. սէզ. շէմ. սան. Լիմ. շէն.

15.



ր և Ն և Ն

իր. էր. ժիր. սար. լար. սէր. ի-րան.

Արշամ, սա ժիր Արան է: Նազ մի անիր, Աննա.  
արի մանիր: Արամ, առ լար:

ա. լ. մ. ի. ս. ե. է. գ. ժ. շ. ն. ր.  
Ա. Ս. Մ. Լ. Ն.

16.



ո և ո


առ. եռ. զառ. սառ. ոէս. ա-մառ.

առ-նիլ. իր. էր. ժիր. լար. սէր. սար. ր. ո.

Մինաս, եզ առմր: Ամառ է, ամառ, Աննա:

ժի+. ի+ան. Ս+ամ.

17.



ո և Ո և Ո


որ. ոզ-նի. որ-սալ. առ. ոէս. սառ. եռ. զառ. ո. ո.  
Ոզնի է սա: Ասա Արշամին, որ մի սազ առնի:

Ես եմ, Մարիամ, մի լար. առ՝ սա որսի միս է:  
ամա+. զա+. ա+հիլ.

18.



Օ.




օր. օս. լօ. լօ-լօ. Ա-լօ. Մա-րօ նա-նօ. Սօս. ա-րօր.  
որ. ո. օ.  
Մարօ, մի լօլօ սսա: Սօս, արօր առա՛ր: Սա Ալօն է, նանօ:  
+զնի. +րսի.

19.



այ.




այս. այլ. այն. այր. այ-րի. ժայռ. լայն. մայր. այ-սօր.

օս. օր. լօ. Սօս. օ. այ.


Մարիամի մայր նանօն այրի է: Մայր, այս  
լայն այր է:

Այս+ր:

20.



ոյ.






ոյժ. լոյս. ա-նոյժ. Ար-շա-լոյս. այս. այր. այն. այլ.  
մայր. ժայռ. լայն. այ. ոյ.

Հոյս արա, Արշալոյս, Մարօն անոյժ է: Ոյժ  
առ, Մարօ:

+սօր:

ա. լ. մ. ի. ս. ե. է. զ. ժ. շ. ն. ր. ու. ո. օ. այ. ոյ.  
Ա. Ս. Մ. Լ. Ն. Ո.





ու ..  ճ 

ուլ. ուս. ուշ. ուր. ուռ. լու. նուշ. ոռւս. սոռւս. ուշիմ.  
ա-նուշ. ա-նուս. ա-շուն. շու-շան. սի-րուն. Ռու-շան.  
Սու-րէն. Ար-շա-նուշ. Սի-րա-նուշ. ոյժ. լոյս. ոյ. ու.

Անուշ սոռւս, առ նուշ է սա: Մարօն մի սի-  
րուն ուլ ունի: Արշանուշ, այսօր ուշ է: Մայր,  
Արան ուշիմ է: Աշուն է, Չուշան, առ մանիր:  
ան+ժ. Արշալ+ս.

ա. լ. մ. ի. ս. ե. է. գ. ժ. շ. ն. ր. ո. ո. օ. այ. ոյ. ու.  
Ա. Ս. Մ. Լ. Ն. Ո. Չ.




իւ 

իւր. սիւն. միւս. ուլ. ուռ. ուս. ուշ. լու. սոռւս. նուշ.  
ռուս. ու. իւ.

Ռնւշան, այն լաւ սիւն է: Աննան իւր միւս  
ուլին է սիրում:

ն+շ. +շիմ. ան+շ. ան+ս. աշ+ն. շ+շան. Ռ+շան.

23.




տ...  Տ 

այտ. տա-րի. տատ. տալ. տէր, տօն. տուն. մատ. շատ,  
շուտ. ա-ռատ. մա-տիտ. մա-տա-նի. Մաս-տա-րա. իւր.  
միւս. սիւն, իւ. տ.

Տատին տարան Մաստարա: Մատանին Մարիամի մատին է: Այս տարի շատ աւատ տարի էր: Ըուտ արի տուն, Տէր Ասատուր: Նատալիա, մատիտ տար տուր Սուրէնին: Այսօր տեն է:

24.



դ..... դ ր ց

այդ. դա. դու. Դա-նի-էլ. դաս. դատ. դար. դէգ. դուր. դուռ. դա-սա-տուն. դա-տա-րան. դա-տաս-տան. դա-տաս-տա-նա-տուն. այտ. տուն. տատ. տէր. տալ. շուտ տօն. շատ. մատ. տ. դ.

Միայն դու Դանիէլ արի զատատուն: Ես այսօր զատարանում զատ ունիմ: Նատալիան Սիրանուշին զաս է տալիս:

+օն. նա+ալիա. Մաս+արա. մա+անի.

ա. լ. մ. ի. ս. ե. գ. ժ. շ. ն. ր. ո. ո. օ. այ. ոյ. ու.  
իւ. տ. դ.  
Ա. Ս. Մ. Լ. Ն. Ո. Զ. Տ. Դ.

25.



թ. ր Թ թ Ռ Ռ\*

ութ. լթի. թէ. թաթ. թութ. թան. թառ. թաս. թէժ. թուր. Սէթ. տօթ. Թա-լիշ. տաս-նութ. Մար-թա. այդ. դուռ. դա. դուր. դաս. դու. դատ. դէգ. դար. դ. թ.


Ռնշան, թութ տար Թաղէին: Այսօր շատ տօթ է: Մարթան մի սիրուն թառ ունի: Մատթէին թան տուր: Տանութ օր Սէթօն ազատ է: +անիէլ. +ասատուն. +ատարան. +աստիարակ. +ատաստան. +ատաստանատուն:

ա. լ. մ. ի. ս. ե. գ. ժ. շ. ն. ր. ո. ո. օ. այ. ոյ. ու.  
իւ. տ. դ. թ.  
Ա. Ս. Մ. Լ. Ն. Ո. Զ. Տ. Դ. Ռ. Թ.

\*) «Ռ»-ի գրչագիրը սխալմամբ չէ գրած 21-դ դասում:



26.



ր . . . . ր

ըն-տա-նի. ըն-տիր. ին-նր. տա-սր. ութ. տօթ. թի. Սէթ.  
թուր. թէ. թաթ. թէթ. թառ. թութ. թան. թաս. թ. ւ.  
Չունը ընտանի անասուն է: Այս ուսումնարա-  
նը իննը դասատուն ունի: Այսօր Արշամը իմանում  
էր իր դասը: Այս ընտիր մատիտ է: Արտաշէսը  
տասը էշ ունի: Մասիսը սար է:  
տասնու+. Մար+ա. Սէ+օն.

27.



վ . . . . վ վ վ


վայ. վան. վազ. վուշ. վառ. վատ. վար. վա-նօ. վա-նի.

վա-սիլ. վա-զիլ. վար-ժա-րան. ւ. վ.

Վասիլը վար է անում Վանում: Վառօն վատ  
վուշ է մանում: Վանի, շուտ վազիր վարժարան՝  
ուշ է:

+նտանի. +նտիր. ինն+.

28.




... ւ . . . . ւ

եւ. լաւ. նաւ. Ա-ւօ. ա-ւազ. ա-ռաւ. Դա-ւիթ. նա-ւա-վար.  
Ար-շա-ւիր. վայ. վուշ. վար. վատ. վառ. վազ. վան. վ. ւ.

Արշաւիրը լաւ նաւավար է: Առաւօտը ոչս  
Աւօն լաւ որսի միս առաւ: Վայ, վազիր, այրում  
է Դաւիթի տունը եւ մառանը:

+առօ. +ասիլ. +ազիր. նաւա+ար.

ա. ւ. մ. ի. ս. ե. է. գ. ժ. շ. ն. ը. ո. ո. օ. այ. ոյ.  
ու. իւ. տ. դ. թ. ը. վ. ւ.  
Ա . Ս . Մ . Լ . ն . Ո . Չ . Տ . Դ . Ռ . Թ .



29.



Փ .....

օֆ. ֆի. ֆէս. ֆիլ. նու-նու-ֆար. եւ. նաւ. լաւ. ւ. ֆ.

Վանին մի ֆէս առաւ: նունուֆարի հայրը  
մի լաւ ֆայէտօն ունի: Սա ֆիլ է:

Դա+իթ. ա+ազ. նա+ավար. Արշա+իր.

30.



հ ..            

ահ. էհ. ոհ. օհ. ուհ. հա. հայ. հազ. համ. ա-հա. Հա-սօ.  
Տի-րու-հի. հաւ. հատ. հայր. հիւր. շահ. հա-մար. Հա-մազ.  
հաս-նիլ. օֆ. ֆի. ֆէս. ֆիլ. ֆ. հ.

Էմինը տանը հիւր ունի: Հասօն իր Համազի  
համար մի ուղ առաւ: Հայր, ում համար է այս  
ողնին: Նա շահ ունի: Մարիամ, վազիր և հասիր  
Տիրուհուն: Նա առաւ տասը հատ նուրը:

նունու+ար. +այէտօն.

31.




յ ..         

էյ. յոյս. յոյժ. յոյն. Յի-սուս. յու-նիս. յու-լիս. Յա-րու-  
թիւն. յար-մար. ահ. էհ. ոհ. օհ. ուհ. հա. հիւր. հայ. համ.  
հազ. հայր. հատ. շահ. հաւ. հ. յ.

Յարութիւնը յունիսին առաւ մի արօր:  
Յունիսը ամիս է: Յոյժ սիրուն հաւ է: Նա յոյն  
է: Այս տունը շատ յարմար է Արտաշէսի համար:  
+իւր +ասօ +ասաւ.

ա. լ. մ. ի. ս. ե. է. գ. ժ. շ. ն. ր. ո. ո. օ. այ. ոյ.  
ու. իւ. տ. դ. թ. բ. վ. լ. ֆ. հ. յ.  
Ա. Ս. Մ. ի. ն. Ո. Ղ. Տ. Գ. Ռ. Թ. Վ. Հ. Է. Յ.

32.



պ. . . պ պ Պ Պ

պա-նիր. պա-շար. պա-ռաւ. պա-րապ. Պա-րոյր. պա-հա-րան. պապ. պաս. պատ. պար. պայտ. պար-տէզ. էյ. յոյն. յոյժ. յոյս. յ. պ.


Պառնւ պապի, պաս մի պահիր: Հուշանը լաւ է պարում: Մարիամը շատ շուտ-շուտ է պարում: Պարոյրը դաս է պարապում պարտի-զում: Պանիրը դիր պատի մօտի պահարանը: Սա շատ յարմար պայտ է էշի ոտի համար:

+խուս. +ունիս. +ուլիս. +արմար:

ա. բ. մ. ի. ս. ե. է. գ. ժ. շ. ն. ր. ո. ո. օ. այ. ոյ.  
ու. իւ. տ. դ. թ. ը. վ. ւ. ֆ. հ. յ. պ.  
Ա. Ս. Մ. Լ. Ն. Ո. Ը. Տ. Դ. Ռ. Թ. Վ. Հ. Է. Յ. Պ.



33.



բ. . . բ բ Ք Ք

բու. բա-զէ. բա-րի. բադ. բալ. բահ. բան. բաշ. բառ. բոյն. բոյս. պապ. պայտ. պաս. պար. պատ. պ. բ.

Սա բազէի բոյն է: Առ բահ և բանիր: Հա-պա Անուշ մի բառ ասա: Սա բամիանի բոյս է: Բարի Սուրէն, բալ տուր Բաղալին: Բաղը առւի մօտ է:

+ահիր. +արապիր. +արոյր.

34.



փ. . . փ ֆ Փ Փ

ափ. փայ. փութ. փուռ. փայլ. թափ. թուփ. Ի-րա-ւա-

փառ. բու. բոյս. բոյն. բառ. բաշ. բան. բահ. բալ. բադ. բ. փ.  
Իրաւափառի հայր Հասօն մի փուռ ունի:  
Թափ տուր այդ շալը: Փարսաղանը մի փութ  
ալիւր տարաւ փուռը:

+ազէ. +ադ.

35.



կ... Կ Կ Կ

ակ. կա-շի. Կա-րօ. եր-կու. կի-րա-կի. կաթ. կալ. կամ.  
կապ. կար. կաւ. կէս. կին. կուժ. կուտ. կոյր. տի'կ.  
լակ. մէկ. շէկ. մուկ. ի-լիկ. ե-կաւ. կա-րաս ան-կապ.  
մա-նուկ. փա-փուկ. Ար-շակ. բա-ժակ. մայ-րիկ. ման-կիկ  
բամ-բակ. մա-նու-շակ. ժա-մա-նակ. Չու-շա-նիկ. ափ.  
փայ. թուփ. թափ. փայլ. փուռ. փութ. փ. կ.

Օրը կիրակի էր, որ Կարօն եկաւ: Արշակի  
բալիկի համար մէկ ուլիկ առ: Մայրիկ, Մանու-  
կին ասա, որ կալի ժամանակ է: Երկու բաժակ

կաթ տուր մանկանը: Չուշանիկ, առ իլիկ և բամ-  
բակ մանիկը կոյր Մանուշակի համար: Այս շէկ  
կաշին բամբակի պէս փափուկ է: Հայկանուշ,  
հաւին կուտ տուր:

Իրաւ + առ:

36.



գ... Գ Գ Գ


գայ. գա-րի. գի-նի. գա-գան. գա-րուն. գալ. գահ. գառ.  
գայլ. գէշ. Նար-գիգ. գան-գակ. գառ-նուկ. Գա-գիկ. ակ.  
մուկ. կէս. շէկ. կար. մէկ. կապ. տիկ. լակ. կոյր. կամ.  
կուտ. կալ. կուժ. կաթ. կին կէս. կ. գ.

Պալուտը երկու կարաս գինի ունի: Պայլը  
գազան է. նա եթէ պատահի գառանը՝ իսկոյն  
պատու-պատառ կանի և կուտի: Նարգիգը իր  
գիծ Պարունիկի համար մի գանգակ առաւ: Գա-  
գիկը գիւղում ունի հարիւր փութ գարի: Ես գա-  
րունը շատ եմ սիրում: Այս շալը լաւ գոյն ունի:  
Եր + ու. + իրակի. + ուժ. իլի +. + արաս. ան + ապ.




մանու+. փափու+. մայրի+. բամբա+. մանուշա+.  
Չուշանի+.

37.



բ..



բա-մի. Բա-լօ. Բամ. բար. քոյր. տաք. դուք. թուք.  
գոյք. քա-բայր. կա-քաւ. գոյ. բազ. գոյն. գալ. դիւ.  
գահ. դիժ. գառ. գէշ. գաղ. գ. ք.

Քալօն կաքաւի պէս պարուժ է: Լաւ տաք է  
այս քարայրը: Քամու ժամանակ էր, որ Քամի  
քոյրը կաքաւ առաւ: Տան հիմքի համար լաւ բար  
պիտի լինի: Գուք հիմա ասէք՝ թէ այդ գոյքը  
ուժ պիտի հասնի:

+իժ. +ազան. +արուն. նար+իզ. դան+ակ.  
+առնուկ.

ա. լ. մ. ի. ս. ե. է. դ. ժ. շ. ն. ր. ո. ո. օ. այ. ոյ.  
ու. իւ. տ. գ. թ. ք. վ. լ. ֆ. հ. յ. պ. բ. փ. կ. գ. ք.  
Ա. Ս. Մ. Լ. Ն. Ո. Զ. Տ. Դ. Ռ. Թ. Վ. Հ.  
Փ. Կ. Գ. Բ.

38.




խ.. խա խս խա

ախ. օխ. նու-խի. խալ. խամ. խան. խաշ. խաս. խաւ.  
խէժ. խուլ. թուխ. մուխ. վախ. խա-խալ. խա-նութ.  
Աշ-խէն. խա-թուն. Մի-խակ. գոյք. տաք. թուք. քար.  
դուք. քոյր. Բամ. ք. խ.

Միխակ, շուտ վազիր խանութ և մի խախալ  
առ: Խանը նուխում բան ունի: Աշխէնի մայր  
խաթունը մի խաս շալ առաւ իր զաւակի հա-  
մար: Վարտիկիս մահուղը լաւ խաւ ունի:  
+արայր. կա+աւ.


ա. լ. մ. ի. ս. ե. է. դ. ժ. շ. ն. ր. ո. ո. օ.  
օ. այ. ոյ. ու. իւ. տ. գ. թ. ք. վ. լ. ֆ. հ. յ.  
պ. բ. փ. կ. գ. ք. խ.  
Ա. Ս. Մ. Լ. Ն. Ո. Զ. Տ. Դ. Ռ. Թ. Վ. Հ.  
է. Յ. Պ. Փ. Կ. Գ. Բ. Խ.



..η η η ʒ ʒ ʒ

աղ. օղ. ուղի. խաղ. մաղ. վաղ. տաղ. խուղ. թաղ. ա-  
քաղաղ. Ղուկաս. Ղազար. Վաղինակ. ախ. օխ. խս.  
վախ. մուխ. խա. թուխ. խաս. խուլ. խաշ. խէժ. խան.  
խամ. խալ. խ. դ.

Ղուկաս, Ղազար, Վաղինակ, եկէք՝ դաս պա-  
րապէք, բաւական է խաղաք: Նունուֆարը վաղ  
եկաւ, որ ալիւր մաղի: Վաղը կիրակի է: Թաղի  
համար պահապան պիտի լինի: Աքաղաղը և հա-  
ւը իրար մօտ կուտ են ուտում:




ծ .. ʒ Թ ʒ

այծ. ծակ. ծամ. ծառ. ծիտ. ծայր. ծոյլ. ծիծ. ծուծ.  
բիծ. կայծ. առած. ծածուկ. ծաբաւ. մածուն. ծա-  
ղիկ. աղ. օղ. թաղ. խուղ. տաղ. վաղ. մաղ. խաղ. դ. ծ.

Մայրը ծիծ է տալիս իր զաւակին: Ծածուկ  
ծաղիկ քաղիր: Ծիտը ծառի տակին է: Վայծակի  
ժամանակ լոյս է լինում: Ծոյլ կին, շուտ-շուտ  
մանիր: Ծոյլը պատժի արժանի է. սա առած է:  
+ուկաս. Վա+ինակ. աքա+աղ:

41.



..... ց ց


այց. ցից. ցոյց. ցած. բաց. բայց. լաց. կաց. ցուցակ.

հաց-թուխ. կա-ցին. դա-սա-ցու-ցակ. Մա-ցակ. այծ. կայծ.  
բիծ. ծուծ. ծիծ. ծոյլ. ծայր. ծիտ. ծառ. ծամ. ծակ. ծ. ց.

Հաց էր լինում մանուկը. մայրը խկոյն հաս  
կացաւ, որ նա հաց է ուզում: Արտաշէսը ցած  
եկաւ ծառից: Հացթուխին ալիւր ցոյց տուր: Առ  
կացին և ցից տուր: Ահա սա է Մացակի դասա-  
ցուցակը:

+խա. կայ+. մա+ուն. +ածուկ. +աղիկ. կայ+ակ.

42.




ձի. ձու. ձագ. ձախ. ձայն. ձէթ. ձա-ւար. ձա-գուկ.  
ձա-լօ. տան-ձի. այց. կաց. լաց. բայց. բաց. ցած. ցոյց.  
ցից. ց. ձ.

Ես ունիմ մէկ լաւ ձի: Արշակի ձախ ոտը  
ցաւում է: Չայն տուր ձնլօ, Բնձակը տանձի  
ծառի տակին է: Իմ ձիու ձագը շատ ժիր է:  
Առ ձաւար և հարիսա եփիր: Սա բաւական, լաւ  
ձէթ է:

բայ+. ցու+ակ. հա+թուխ. դասա+ուցակ.

43.




ձա-ճիկ. ճաթ. ճաղ. ճան. ճաշ. ճառ. ճար. ճուտ. ճօճ.  
դան. ման. խին. օ-ճառ. ան-ճար. հա-ճար. հան-ճար.  
ճար-պիկ. պատ-ճառ. ձի. ձու. ձախ. ձէթ. ձագ. ձայն. ձ. ճ.

Գէհ, ձանձիկ, մի ճառ խօսիր: Մարօն պառ-  
կած է ճօճում: Ձաշ արէք ու խին տարէք՝ ու-  
ղին ուղղէք: Գան տարէք պատի համար: Նա ան-  
ճար է և հացի կարօտ: Սուրիկը շատ ճարպիկ է:

+աղ. +աւար. +աղուկ. տան+ի.

44.




ոշ. շայ. շէ. շէշ. շաւ. շաղ. շար. շիթ. շիր. շութ. խաշ.  
կուշ. փուշ. բիշ. շա-միշ. ճա-նաշ. կա-շա-ղակ. Խա-շա-

տուր. ոչ-խար. Խա-չիկ. Չի-հաս-տան. Խիճ. ման. դան.  
ճօճ. ճար. ճուտ. ճառ. ճաշ. ճան. ճաղ. ճաթ. ճ. շ.

Չար Խաչիկի համար չամիշ տար: Հապա  
Խաչատուր, Խաչ հանիր: Այդ շատ շար ոչխար  
է: Կատուն տարաւ շալ ու շաղ վառիկին: Կա-  
չաղակի ձագին շիր տուր, որ ուտի: Չինաստա-  
նում շատ թէյ կայ:

ան+ար. ձա+իկ. հան+ար. պատ+առ.

45.



էջ. ջահ. ջան. ջիդ. ջուր. սաջ. քաջ. ջա-նիկ. եր-ջա-նիկ.  
բան-ջար. Ջա-ւա-հիր. Մար-ջա-նիկ. ոչ. շայ. շէ. քիշ:  
փուշ. կուշ. Խաշ. չութ. շիր. շիթ. շար. շաղ. շալ. շ. ջ.

Ջանիկ, բանջար տար Ջաւահիր տառի հա-  
մար: Մարջանիկը ջուր է ուղում: Աշխէն ջան,  
դահլիճի ջահը վառիր, որ լոյս լինի: Քաջագնու-  
նին Ջալալբէգից շատ քաջ է:

չամի+. ճանա+. կա+աղակ. Խա+ատուր ո+խար.  
Խա+իկ. +ինաստան:

46.

7  
Խօ. Խօ

Խօթ. Խօթ-նա-նուն. Խօ-թա-նա-սուն. Խօ-թա-նա-սուն-  
Խօթ. գեօր-գի. Գեօք-չայ. էջ. քաջ. ջիդ. սաջ. ջուր. ջան.  
ջահ. շ. Խօ.

Քաղումը միասին խաղում էին Խօթանասուն-  
Խօթ մանուկ: Սա գեօրգի ծաղիկ է: Արգարը հա-  
սաւ Գեօքչայ:

բան+ար. +աւահիր. Մար+անիկ.

47.

Խա Խա

Խա-նեակ. մա-նեակ. Դայ-եան. Ա-րու-սեակ. Ե-րա-  
նեակ. ա-ղաւ-նեակ. Ա-րա-մեան. Եա-ղու-բեան. Խօթ.  
Խօ. Խա:

Եաղուբեանը և Արամեանը այսօր եկան ու-  
սումնարան: Աղաւնեակը լաց է լինում: Արուսեակ,

առ կախիր այս ոսկու մանեակը: Դայեան Երանեակի գիրքը տարէք տուն:

Գ+քչայ. լուսն+կ. +թանասուն. Արուս+կ. Գ+ըգի. Երան+կ. Դայ+ն:



### Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Կ

### Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

Վ Ա Ր Ժ Ո Ի Թ Ի Դ Ն Ն Ե Ր Ո Վ

# ր

Տի-գրա-նեանը ճանկաստան եր-կրից այսօր եկաւ: Այս սա-նըրը ոս-կրից է շինած: Բա-գրատը Աս-տրախան քաղաքում լաւ է ա-պրում:

# ը

Իմ սը-րած մատիտը լաւ է գը-րում: Այս բժիշկը շատ հմուտ է: Հասած պտուղը տուր մանկանը: Ծիտը թուաւ թվի տակից: Հացթուխը գնաց, որ հաց թխի: Տղաս եկաւ ուսումնարանից:

Տասը թըռ-չուն միասին թռան: Պատիկ Արմիկը կրկին վայր ընկաւ: Բռնիր, սա ձնծաղիկ է: Աշմարիտ է

ասում Վանին, սը ջրկիր Ջհանգիրը գնաց Սղեախ:

Սիրուն թըռչ-նիկ, դարձիր, գնա:

Մը-կըր-տիչը գնաց տուն:

Մանրահատիկ բը-բըն-ձից տուր Անուշին:

\*  
\*\*

Արամ, կանգ առ, այդ արտ է: Ամառը շատ ճանճ է լինում: Թիֆլիզ քաղաքում շատ գօրք կայ: Պապի երի-տասարդ Գալուստ ծառան լաւ վարք ու բարք ունի: Ա-կանջ արա ինձ՝ դու պէտք է սիրտ տաս Հայկին, որ նա մարտ ամսում ցանք անի:

Խաչատուրը լաւ կուրծք ունի:

# ս դ ն ր ե

Առ գիր-քըս եւ պատրաստիր դա-սըդ: Բանդ արա, մի քնիր: Տատիկս նստած ժամանակ էլ ննջում է: Հուն-ձըն ամա-ռըն է ընկնում: Իմ մատիտն լաւ է գրում: Երկինքն այսօր պարզ է: Աշխէնն շատ մա-նըր է կարում: Հաւած տանձը շատ բաղցր է լինում: Սա սանը է, որ շինած է փղի ատամից: Բարդին բարձր ծառ է:

# ե-է ի

Երասխը մեծ գետ է. նա մեր գիւղից հեռու չէ: Մենք ինչ մեզ ունենք, որ դուք մեզ ձեծեցիր: Երեխա-ներ, առեք՝ կաթի սեր կերէք: Ինչի Արփենիկը լաց է

լինում. նա վայր է ընկել. տեսէք, քթից ինչպէս արիւն է գնում. սառը ջուր բերէք: Ընկերուհի նազենիկը ասեղը լաւ է բանեցնում և հեշտ կար անում: Հեղինէն վերադրուին հանեց, սեղանի մօտ նստեց և կերակուրն անուշ արեց: Ներկարարը դեղին ներկ պատրաստեց գեղատան նախասենեակը ներկելու համար: Կօշկակարը սեւ սեկից կարեց վեց գոյգ կօշիկներ:

Եւ - և Ձ

Ջանգի գետը դուրս է գալիս Սևանի լճից: Երևան և Նախիջևան քաղաքներում խախտողի շատ այգիներ կան: Արևը տաքացնում է երկիրը: Անձրև է գալիս: Արի թև առնենք թռչենք այս իջևանից, որ ձի չկայ:

Իւ - իւ

Խստիւ պատուիրի, որ լաւ հաշիւ պահեն: Աշխատանքի համար ազնիւ ճանապարհ ընտրեցիր. այդ քեզ պատիւ է բերում: Արծիւն ամենից ուժեղ թռչունն է: Սա կառքի անիւ է: Գիշերներն անթիւ աստղեր փայլում են երկնքում: Լրիւ գրիր այդ թիւը: Հիւանդին պէտք է իսկոյն դեղ տալ:

ո-օ

Անձրև օրը հաւերին ջուր տուող շատ կը լինի: Այս տարի մօրեխը փշացրեց ցորենը. գուցէ սով լինի: Գովը

ծնեց հորթ: Յովհաննէս Մկրտիչը Քրիստոսին մկրտեց Յորդանան գետի մէջ: Ըողերը նոր շորեր է կարել տւել: Ձին ունի երկար պոչ: Գողին բռնեցին և մի լաւ ծեծեցին: Մեր գիւղում ամառը հով է լինում: Մանուշակը լաւ հոտ ունի: Սոխը կծու է, իսկ գոխը՝ թթու: Բժիշկ, ես դող ունեմ. դեղ գրէք ինձ համար: Փայտը վառւեց մոխիր դարձաւ: Կիրակոսի փորը ցաւում էր. նա կերել էր խակ խաղող:

- Երեսաներ, ձեզանից ո՞վ գիտէ՝ ինչ է ովկիանոսը.
- հարցրեց հայրը իւր գաւակներին:
- Ես գիտեմ, հայրիկ. ովկիանոսը շատ մեծ ծով է.
- պատասխանեց ըողերը:
- Այո՛, հիշտ է քո ասածը:

Մօրս անունը Նոյեմ է, իսկ քո մօր՝ Նոյեմզար: Հիմա Նոյեմբեր ամիսն է: Հայրս խոյեցի է, որովհետև Նոյ քաղաքումն է ծնւել: Նոյ նահապետն շատ բարի էր:

Յ

Տղայ, որ ճամպայ ընկնես, շուտ-շուտ գնա: Ես իսկոյն վրայ հասայ: Փոքրիկ երեխայ, առ քեզ տամ ընծայ: Օհանեանց, եթէ դասարանում կաւիճ չկայ, օրապահին ասա, որ գայ տանի: Ծառային հասկացրու, որ շուտ գնայ՝ ջրաղացում մնայ, ցորենը աղայ, յետոյ շմոռանայ, հացթուխից իմանայ՝ թէ այս երեկոյ նա կը գնայ: Այսօրւայ ճաշը քիչ ուշ պատրաստ կը լինի: Այս տարւայ ձմեռը շատ երկար էր:

# Գ-ԸԳ Ղ-ԸՂ Ա-ՐԱ

Հայրիկս զբօսնելու ժամանակ զգաց՝ որ ցուրտ է, վազեց՝ մտաւ տուն: Ինձ համար նոր զգեստ առանք: Զգոյշ կաց, որ ուսուցիչը նկատողութիւն չանի քեզ: Մի շտապիր, քիչ սպասիր, յետոյ նորից սկզբից պատմիր: Հիմա Տիգրանուհին սկսել է լաւ սովորել իր դասերը: Կատուն խաղում է սուերի հետ:

# Դ-Թ

Մարդս օդ է ներս շնչում: Մայիսին բացում է վարդը: Վարդան զօրապետի ձին լաւ զարդ ունէր: Զօրքը մտաւ բերդը: Ոչխարների վրայից բուրդը ամառն են խուզում: Ո՛րդի, հարկաւոր է կարդալ: Գայլը վայրենի կենդանի է: Թաղէսը կարդում է Սօս և Վարդիթեր գիրքը. նա ընդունակ աշակերտ է: Այս վանքի վանահայրն Ադամ վարդապետն է: Մարդու մարմնի անդամները վիճեցին միմեանց հետ:

# Ղ-Հ

Արջն իր անից կը գողայ: Համասփիւռն անտառի մէջ սաստիկ թրջւել էր: Թող առաջին գոյզը գայ կանգնի իմ առաջ: Կարդալիս եթէ միջակէտ պատահի, պէտք է ձայներս ցածրացնենք և քիչ սպասենք:

# Գ-Ք

Օգոստոս ամիսն է, բայց շատ շոգ է: Ես կարող եմ երգ երգել: Օծման ժամանակ թագաւորը թագը դրեց թագուհու գլխին: Երեխաները աղմուկ զցեցին սենեակում: Մեր աւագ ուսուցիչը Գրիգոր Գէորգեանցն է: Առաջին անգամն է, որ Մարգարը ուրագ է բանեցնում: Վերկաց հոգիս, հագնւիր և արի այստեղ՝ կարագ ուտենք: Արեգակը լուսաւորում և տաքացնում է երկիրը:

# Բ-Վ


Զարթն ունի եօթն օր՝ երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, կիրակի: Զաւակս, երբէք ծնողներիդ չը խաբես: Ով կը բրթի, նա էլ կուտի: Ես մի օրը երեխայ եմ պահում: Տես ինչպէս մայրը համբուրում է որդուն: Գրատախտակի սրբիչը մաքուր չէ:

# Ճ-Ե.ԱՌ-Թ.Դ-Խ.Բ-ԱԿ

Համբարձում, մօտեցիր և փորձիր այս օձը բռնելու. նա իսկոյն կը կծի քեզ: Արտաշէս թագաւորը շատ էր սիրում Սմբատ իշխանին:

եղբայր, հարկաւոր է աղբիւրի պարզ ջուր խմել և ոչ թէ առի կեղտոտ ջուրը:



Աղջիկը ձև անելու համար թուղթի առաւ:



Ես շատ եմ սիրում կարդալ Բաֆֆու գրած գրքերը: Քաղաքում կայ կարմրուկ հիւանդութիւն. մեր ընկերներէրից և ընկերուհիներից կարմրուկով հիւանդ են և այսօր ուսումնարան չէին եկել հինգ հոգի՝ էլշիբէզեանց Արմենակը, Ժամհարեանց Սիրանուշը, Յոլակեանց Տիգրանը, Օհանեանց Խոսրովիգուխտը և Փռանգեանց Եղիշէն:

Վարդալ, երգել:

Ես կարդում եմ, դու կարդում ես, նա կարդում է. Մենք կարդում ենք, դուք կարդում էք, նրանք կարդում են: Ես երգում եմ, դու երգում ես, նա երգում է. Մենք երգում ենք, դուք երգում էք, նրանք երգում են:



Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Դ

## Ա.ԶԱՏ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Ե Ա Ն Ի Կ

Ծիծիկ կըտամ նախշուն բալիս\*),  
Բալէս ուտի կշտանայ,  
Ծիծիկ կըտամ, նանիկ կասեմ,  
Բալէս քնի մեծանայ:

Հ Ի Ն Գ Զ Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք

Ես աչքերովս տեսնում եմ, ականջներովս՝ լսում, քիթովս հոտ առնում, լեզուովս՝ ճաշակում, ձեռքերովս շոշափում:

Ի Մ Բ Ա Լ Ի Կ Ը

Լեզւին մատաղ իմ բալիկի՝  
Ծիծեռնակ է ծըլւըլան,  
Տարած նա միշտ խաղալիքի՝  
Թիթեռնիկ է թըուըռան...

\*) Երեխայիս:



Երգ ու խաղը շրթունքներին՝  
Ուլիկի պէս մըկըկան,  
Դեռ չեմ տեսել ուրիշներին՝  
Բալիկիս պէս կըլպըլտան\*):

Ծ Ն Ո Ղ Ա Մ Է Ր Ա Ղ Զ Ի Կ

Փոքրիկ Հեղինէի մայրը հիւանդացել էր: Բժիշկը  
տւեց նրան մի դեղ՝ որ խմի: Դեղը շատ դառն էր. հի-  
ւանդը խմելիս՝ զզոււմ էր: Հեղինէն տեսաւ այդ և մօրը  
ասեց.

— Սիրելի մայրիկ, տուր ինձ դեղը՝ ես խմեմ քո  
փոխարէն:

Ա Ռ Ա Ի Օ Տ

— Ծճու-դրճու-դճու, դճու, լուսացան,  
Վեր կաց թառից ցած արի.  
Եարար\*\*) քեզ պէս քընուկ հաւ՝  
Մեր նանն էլի կը ճարի...  
Եւ հաւերը սուս ու փուս՝  
Թռան մէկ-մէկ բնից դուրս...

— Ծճու-դրճու-դճու, դճու, ճաշ դառաւ...  
Ըյան-նանի, դճուրս արի.  
Դեռ էնքան էլ չես պառաւ,  
Որ կուտ տալդ ալարի...  
Եւ կատարեց մեր նանը  
Չալ աքլարի հրամանը...

\*) Միշտ ասող, խօսող, երգող:

\*\*) Արդեօք:

Մ Ր Տ Ա Յ Ա Ի Մ Ա Յ Ր Ը

— Ձարթիր, Հոփսիկ: Ի՛նչ է, տկճր ես. ինչո՞ւ չես  
զարթնում: Հասկացայ. երեկ ճաշից յետոյ շատ խաղա-  
ցիր՝ քրտնել ես, ջուր խմել և մըսել: Տեսէ՞ք, ինչպէս  
տաք է ճակատը և ձեռքերը. — ասեց մայրն և բժշկի յե-  
տևից ուղարկեց:

Ա Ք Լ Ա Ր

Ինչո՞ւ աքլարը կանգնած է բակում,  
Պինդ-պինդ կանչում է իր կուկուրիկուն.  
Էնդուր որ՝ վաղուց արևն է ծագել,  
Բայց ծոյլ երեսան քնից չի զարթել.  
Դեռ չի վերկացել, աղօթքն արել,  
Դպրոցի դասը դեռ չի սովորել:  
Կանչում է աքլարն իր կուկուրիկուն,  
Տղայոց պարտքը միտներն է ձգում:

ԱՂՍԷՆՆ ԱՂԱԿԵՐՏՈՒՀԻ

Առաւօտեան մայրիկս հանդարտ մօտեցաւ անկողնիս  
և սկսեց զարթեցնել ինձ: Ես չէի զարթնում և խըն-  
դրում էի, որ թողնի՝ էլի քնեմ:

— Քնիր, եթէ չես ուզում ուսումնարան գնալ, ասեց  
մայրիկս:

Ուսումնարանի անունը լսելուն պէս՝ իսկոյն վերկա-  
ցայ: Երբորդ օրն էր, որ ես գնում էի ուսումնարան:  
Չտապով հագնեցի, լացեցի, իսկ երկայն մազերս սա-  
նրեց մայրիկս:

Ես պատրաստ էի: Մայրիկս բերեց՝ հագցրեց՝ նոր

պատրաստած հագուստս և ես դարձայ աշակերտուհի:  
Նստեցի սեղանի մօտ՝ նախաճաշիկ անելու: Յիտոյ մայ-  
րիկս համբուրեց իմ երկու այտերից և ինձ ուրախ-ու-  
րախ ճանապարհ զցեց զէպի ուսումնարան:

### ԽՈՐԱՄԱՆԿ ԱՂՋԻԿԸ

Ճըլվը՛ստ, ճըլվը՛ստ, ճախարակ,  
Ես հաստ մանեմ, զուք բարակ,  
Ես մեղր ուտեմ, զուք կարագ.

Չատ մանողին շալ շապիկ,  
Քիչ մանողին չիթ շապիկ:

### ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ԱՐԱՄԸ

Արամն առուօտեան վաղ զարթնեց, շտապով հագ-  
նեց, լացեց և գտակն ծածկելով՝ ուզում էր սննեակից  
զուրս գնալ:

— Ո՛ւր, գաւակս. հարցրեց մայրը:

— Ուսումնարան:

— Առանց նախաճաշիկի:

— Կուշանամ. իսկ ուսուցիչը պատւիրել է ժամի ու-  
թին այնտեղ լինել:

— Հիմա եօթն է: Ա՛յ, ժամացոյցը խփում է, համա-  
րեր: Իսկ թէյը վաղուց պատրաստ է:

— Այո՛, եօթն անգամ խփեց, ուշ չէ. ասեց Արամն և  
նախաճաշիկի նստեց:

— Չատ ուրախ եմ, սրղի, որ դու այդպէս շուտ սի-  
րեցիր ուսումնարանը:

### ԻՄ ՄԱՆԻԿԻ ՕՐՕՐԸ

Քուն եղիր, Մանիկ,  
Քնիր, իմ բալսս,  
Աչքդ խնկի արա,  
Հերիք, քանի լաս:  
Ահա քեզ կաթը,  
Կեր ու կշտացիր.  
Ահա տաք շորեր,  
Դէհ, հանգստացիր:

Լայ-լայ սիրուն, իմ Մանիկ,  
Լայ-լայ նախշուն իմ մանկիկ.  
Մատաղ լինիմ աչքերիդ,  
Մատաղ կամար ունքերիդ:  
Պաշիկ կըտամ ճակատիդ,  
Պաշիկ փափիկ թաթիկիդ.  
Լայ-լայ, լայ-լայ, իմ Մանիկ,  
Լայ լայ, լայ-լայ, իմ մանկիկ:

### Ա Ն Յ Ո Ր Դ

Երեկոյ էր: Եղանակը ցուրտ: Պառաւ Նազլուն զուրս  
եկաւ փողոց: Այնտեղ՝ պատի մօտ, նստել էր մի մարդ:  
Նա հիւսն էր: Պարկի մէջ երևում էին նրա գործիքները:

— Ինչո՞ւ ես նստել, վարպետ.— հարցրեց պառաւը:

— Յոգնած եմ, մայրիկ: Հեռու տեղից եմ գալիս և  
ժամանակին էլ շարձակեցին: Նստեցի այստեղ, որ քիչ  
հանգստանամ:

— Բայց այդտեղ ցուրտ է, սրղի. ներս արի խրճիթը՝  
հանգստացիր, տաքացիր: Հիմա որդիս էլ կըգայ, ընթրիք  
կանենք և յետոյ կերթաս:

### Ո Ր Բ Ի Կ

Ջրկած հորից, զրկած մօրից,  
Լալիս է նա դառնազին.  
Ճրտում քաղցած զողողոզում է,  
Նա շոր չունի իր հագին:

Մի լաց լինիր, արի մեր տուն,  
 Որբիկ ես մերկ և քաղցած,  
 Մի լաց լինիր, արի մեր տուն,  
 Մենք քեզ կրտանք շոր ու հաց:

**ԱՆԳՐԱԳԵՏ ԳԻՒՂԱՑԻՆ**

Հայրը որդուց նամակ էր ստացել: Նրա որդի Աղասին ուսանում էր հեռու քաղաքում: Նամակը բաց արեց, բայց ինքը կարգալ չըզիտէր: Նա վազեց գիւղամէջ. այնտեղ էլ ոչ մի գրագէտ մարդ չը գտաւ. իսկ քահանան տիրացւի հետ զնացել էր հարևան գիւղը: Նա չըզիտէր ինչ անէր: Նոր հասկացաւ ուսման նշանակութիւնը: Ուրիշ ճար չը կար: Նա սպասեց, մինչև որ քահանան վերադարձաւ գիւղը:

**Վ Ա Ր Դ Ա՛, Գ Ր Ի՛ Ր:**

- Վարդան, այ իմ խելօք մանուկ,
- Վարդան, գրիւր տարին բոլոր...
- Վարդան, սրդիս, որ հօրդ պէս
- Գու էլ անուս, խեղճ չմնաս,
- Որ ամենքին վիզ չըծուես,
- Եւ միշտ ազատ, առաջ գնաս:

**Ա Ղ Ա Մ ՈՒ Ն Ա Մ Ա Վ Ը**

Սիրելի ծնողներ.

Գիտեմ՝ բարկացած էք ինձ վրայ, որ սեպտեմ-

բեր ամսին չէի ուզում ուսումնարան զնալ: Ես մեղաւոր չէի. կըզամ գիւղը և ամենը կըպատմեմ: Սեպտեմբեր ու հոկտեմբեր ամիսներն անցան. հիմա նոյեմբերն է, յետոյ դեկտեմբերը: Այդ ամսի վերջին մեզ կարձակին և ես կըզամ գիւղը:

Վարժ գրել և կարդալ դեռ չենք սովորել: Այս նամակը գրել է հօրեղբօր որդի Յովհաննէսը, իսկ նամակի տակին անունս ես եմ գրել: Արձակուրդից յետոյ՝ յունւար, փետրուար, մարտ, ապրիլ և մայիս ամիսներում կըսովորենք լաւ գրել ու կարդալ: Բարկեցողանին և զատկին էլ մեզ կարձակեն, իսկ յունիս, յուլիս և օգոստոս ամիսներում բոլորովին դասեր չենք ունենալ:

Յտեսութիւն:

Ձեր որդի՝ Աղասի:

**Ա Ռ Ա Մ Ն Ե Ր**

Ով կարդայ՝ մարդ կըզառնայ: Պահիր առողջութիւնդ փոքրուց: Սովորիր միշտ լաւ բան անել՝ վատը միտքդ երբէք չի ընկնիլ: Արիւնն արիւնով չեն լւանալ, այլ՝ ջրով: Ձւի գողը ձիու գող կըզառնայ: Եղիր մերկ, բայց ոչ գող: Սեին սապոնն ինչ՝ անի, խեին խըւտն ինչ անի:

**Ա Ղ Խ Ա Տ Ա Ս ԷՐ Ը Ն Տ Ա Ն Ի Ք**

— Ես նստած էի լուսամուտի առաջ և նայում էի դէպի փողոց: Լուսամուտը բաց էր: Սաստիկ անձրև էր գալիս և ցելս էր: Փողոցով անցնում էր մի փոքրիկ աղջիկ, որ եկաւ՝ կանգնեց լուսամուտի մօտ՝ պատշգամբի տակ: Նա հագել էր հին՝ բայց մաքուր շորեր: Այդ ամենը ես տեսնում էի լուսամուտիս ապակու մէջ:

— Աղջիկը շալակի լիք պարկը դրեց ցած և այս հա-

շինն էր տեսնում. «Հացն արժի չորս կոպէկ. շաքարն ութ. չորս և ութ՝ կանի տասներկու: Թէյն արժի երկու կոպէկ. տասներկու և երկու՝ կանի տասնչորս: Իւղն էլ արժի վեց կոպէկ: Բոլորը՝ քսան կոպէկ. այնքան՝ ինչքան որ պէտք է ստանամ: Չտապեմ, քանի որ գործարանը չեն փակել»:

— Կայ, խելօք տղջիկ— ձայն տւի ես նրան: Առ այս քսան կոպէկը և գնիր ինչ որ քեզ համար հարկաւոր է:

— Ես աղքատ չեմ, պարոն: Ամեն օր ես փալասներ եմ հաւաքում և երբ այս պարկս լցում է՝ տանում եմ գործարան: Այնտեղ սրա համար ինձ վճարում են: Իսկ մայրիկս տանը գիշեր-ցերեկ կար է անում, մի քանի կոպէկ էլ նա է ստանում:— Ասեց աղջիկն, շալակեց պարկն և գործարան շտապեց:

Գիտէք, սիրելի մանուկներ, այդ փալասներից պատրաստում են այն մաքուր, սպիտակ թուղթը, որի վրայ դուք հիմա գրում էք և կարդում:

Ն Ա Ն Ի Հ Ր Ա Ի Է Ր Ը

— Բճւլի-բճւլի, իմ բաղիկներ,  
Եկէք՝ կերէք ձեր հատիկներ:—  
Բաղ ու բաղիկ, կարմրաթաթիկ,  
Նախշուն փետուր՝ գիփ խատուտիկ,  
Տուն գնացին օրօրելով՝  
Աղիզ-մազիզ շօրօրելով:  
Տուն գնացին՝ գտան նանին,  
Պատիժ դառան նրա ջանին.  
— Զը՛ր-ճը՛րտ, չը՛ր-ճը՛րտ, զան-զան, զան-զան,  
— Բան մեր կուտն էս սրտեղ ա:

Նանը գնաց սիմինդ բերեց,  
Առատ-առատ գետնին փռեց,  
Նոքա կերան լիք-լիք բերան,  
Կըշտացան ու՝ հայդէ կորան:

Մ Ե Ղ Ո Ւ Ն Ե Ի Ա Ղ Ա Ի Ն Ի Ն

Աղանին նստել էր ծառի վրայ: Նա տեսաւ՝ որ մի մեղու ընկաւ ծառի մօտ գտնւած լիճը և քիչ էր մնացել՝ խեղտի: Աղանին խղճաց մեղուին, մի տերև պոկեց և գցեց ջրի մէջ: Մեղուն տեսաւ տերևը՝ բարձրացաւ նրա վրայ, թևերը ցամաքացրեց և բզզալով թռաւ՝ նստեց ծառի վրայ:

Այդ միջոցին մի որսորդ՝ հրացանը ձեռքին՝ կամաց-կամաց մօտեցաւ և նշան բռնեց աղանուն, որ նստած տեղը ննջում էր ծառի վրայ: Մեղուն տեսաւ այդ, կայծակի պէս վրայ հասաւ և այնպէս խայթեց որսորդի ձեռքը, որ նա ցնցեց և գնդակը չըղիպաւ աղանուն: Աղանին զարթնեց և թռաւ՝ գնաց:

Մ Ե Ղ Ո Ի

Ամեն օր և օր բոլոր  
Ես գնում եմ դաշտ ու ձոր.  
Աշխատում եմ ես անվերջ,  
Մեղր փնտրում ծաղկանց մէջ:  
Եւ գտածս ես շիտակ  
Տանում եմ իսկոյն փեթակ,  
Որ երբ փչէ ցուրտ քամին,  
Ծաղիկները թառամին,  
Եւ ձմեռը պաշարով  
Լինիմ իսպառ ապահով:

### ՀՆԱՐԱԳԷՏ ԱԳՌԱԻԸ

Մի անգամ մի ագոաւ այնպիսի մի տեղ էր ընկել, որտեղ ոչ աղբիւր կար, ոչ առու, ոչ գետ... որ ջուր խմէր: Նա սաստիկ ծարաւ էր: Չատ այս ու այն կողմն ընկաւ՝ վերջը գտաւ մի շիշ, որի մէջ ջուր կար: Բայց ջուրը շիշի մէջ քիչ էր. կտուցը չը հասաւ: Ազոաւը մըտածեց, մտածեց, յետոյ կտուցով վերցրեց մանր քարեր, նրանցից այնքան լցրեց շիշի մէջ, որ ջուրը բարձրացաւ, կտուցը հասաւ՝ խմեց, թուաւ՝ զնայ:

### Ծ Ի Տ Ն Ո Ի Մ Ա Ն Ո Ի Կ Ը

Պատիկ-մատիկ ան ծիտիկ,  
Քանի թռչես ծառից-ծառ,  
Գոնէ մի տեղ քիչ տիտիկ,  
Յողնած թևիդ հանգիստ առ:

— Զը՛գ-վը՛ստ, ճը՛գ-վըստ, ծիւ, ծիւ ծիւ,  
Ես յողնելու սովոր չեմ,  
Կուզեմ լինեմ մեծ արծիւ,  
Որ աւելի շատ թռչեմ:

### Ո Ի Բ Ա Խ Կ Ա Ղ Ա Ն Գ

Ձմեռն էր. կաղանդի երեկոն: Ազասու ծնողները, պապը, տատը, եղբայրներն ու քոյրերը նստել էին քուրսու չորս կողմը: Ազասին տանը չէր: Նա ուսանում էր քաղաքում: Նրանց ուսումնարանում արձակել էին աշակերտներին, բայց Ազասին քաղաքից դեռ չէր եկել գիւղը: Մայրը մի լիքը կապած թաշկինակ դրեց քուրսու վրայ և ցոյց տալով այն երեխաներին՝ ասեց.

— Ձեզանից ով որ իմանայ՝ թէ ինչ կայ սրա մէջ, ես նրան միրգ կըտամ:—

— Ինց պիտի լինի, կզելու բուլթ է, — ասեց Ռուբէնը, որի լեզուն նոր էր բացուում:

— Ո՛ր, — պատասխանեց մայրը:

— Բամբակ է մանելու համար, — վրայ բերեց Բագրատը:

— Եւ ոչ էլ բամբակ:

— Ես իմացայ, մայրիկ. մետաքս է. — շտապով ասեց Անահիտը:

— Ո՛չ, սիրունիկս, դու էլ չիմացար:

— Միրգ է, միրգ, մայրիկ. այնպէս չէ, որ պէտք է մեզ տաս, — գոչեց Արփենիկը, որ երեխաների մէջ ամենից մեծն էր:

— Այո՛, աղաւնեակս, միրգ է. դու իմացար. — ասեց մայրը և բաց արեց թաշկինակը:

— Պա՛, պա՛, պա՛, այս ինչ է. կաղին, չամիչ, ունար, թո՛ւզ, փշատ, սալոր, չիր, ընկճուգ... ամեն կողմից թըռվում գոչեցին երեխէքը:

— Գիտէք, երեխէք. — շարունակեց մայրը. — էգուց նոր տարի է, այսօր՝ կաղանդ: Ձեզ համար քաղցը միրգ եմ բերել, որ դուք ուտէք և այս նոր տարում պապի, տատի, հայրիկի, մայրիկի համար քաղցը խելօք զաւակներ լինէք:

— Ես շաքարի պէս քաղցը կըլինեմ. — ասեց Արփենիկը: — Իսկ ես՝ միզի պէս. — վրայ բերեց Բագրատը:

— Ես էլ չամիչի պէս, — ասեց Անահիտը:

— Ե... Ե... Ես էլ մաճնի պէս. — ասեց Ռուբէնիկը:

— Այդ չեղաւ, Ռուբէնիկ. դու ուզում ես մայրիկի համար չամի տղայ լինես: Ձէ որ մաժունը թթու է լինում. — ամեն կողմից գոչեցին երեխէքը:

Ե... Ե... Ես քաղցը մաճուն եմ ասում, թթու մաճուն չեմ ասում:

—է՛հ, երեխէք, բաւական է. ապրէք, որ բոլորդ էլ ուզում էք խելօք զաւակներ լինել: Հիմա ես ամենքիդ էլ միրգ կըտամ,—ասեց մայրը և սկսեց բաժին անել:

—Ամենից առաջ կակուղ մրգերից տանք պապին ու տատին: Հայրիկին էլ թողնենք, որ իր համար բաժին վերցնի: Ահա այս էլ մայրիկի բաժինը...:—

—Իսկ իմ բաժինը՝ մայրիկ.—ներս մտնելով ասեց Աղասին:

—Վճույ, մայրիկը կարգացող տղին մատաղ լինի: Աղասի ջան, այդ դճւ ես.—գոչեց մայրը և զրկեց որդուն:

—Ե՛ս եմ, ես. Աղասին:

—Ե՛կ, զաւակս, մտիր քուրսու տակը:

—Օ՛ մայրիկ, ես քուրսու մասին բոլորովին մոռացել եմ: Այնտեղ քաղաքում վառարանով են տաքանում: Բայց ես շատ յոգնած եմ:—

—Այո՛, քեզ հարկաւոր է շուտ քնել.— ասեց մայրը, բաժանեց միրգը և գնաց՝ որ ընթրիք պատրաստի:

### Ն Ո Ր Տ Ա Ր Ի

Սիրուն նոր տարի,  
Այ բարով եկար.  
Տեսնեմ ինչ բերի  
Ամենիս համար:

Օրեր երջանիկ,  
Նոր միտք ու շնորհք,  
Մրգեր քաղցրիկ  
Ու շատ խաղալիք:

Բարի նոր տարի,  
Անտես չը թողնես  
Մնտուն աղքատին  
Եւ խեղճ դժբախտին:

### ԱՂԱՍՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԸՆ ԳՆԱԼԸ

Սեպտեմբեր ամիսն էր. դիզից գնում էինք քաղաք: Ես շատ էի ուրախացել, որ պէտք է քաղաք տեսնէի: Երբ տեղ հասանք՝ ես հիացել էի, երբ տեսնում էի բաձր, գեղեցիկ տները, լայն, քարած, մաքուր փողոցները, մեծ մեծ խանութները, երկաթուղին, ֆայէտօնները...

Հետեւեալ օրը հօրեղբայրս ասեց. «Աղասի, գնանք ուսումնարան»:

Հէնց որ ուսումնարանի անունը լսեցի՝ դողս բռնեց: Զէի ուզում ուսումնարան գնալ: Լսել էի, որ այնտեղ աշակերտներին ծեծում և հազար ու մի տեսակ պատիժներ են տալիս: Ես «չեմ ու չեմ» արեցի, բայց հօրեղբայրս տարաւ ինձ մինչև փողոցի դուռը, որտեղից յետ փախայ տուն: Երկրորդ օրը ճանապարհի կիսից փախայ. երրորդ օրը հէնց հասանք ուսումնարանի դռան մօտ՝ ուսուցիչը կանգնած էր ներսում, մօտ եկաւ և սկսեց ինձ հետ խօսել: Ես «սիրտ առայ» և մնացի ուսումնարանում:

### Հ Ր Ա Ի Է Ր Գ Ա Ր Ն Ա Ն

Սիրուն գարուն, դէ՛հ, շուտ արի,  
Քեզ ենք սպասում մի տարի,  
Զին\*) ձմեռայ էս ցրտերը  
Մաշեցին մեր սրտերը:

Արդէն վաղճւց քեզ են կարօտ՝  
Գաշտն ու այգին ու արօտ.  
Անտառներն և սար և ձոր՝  
Քեզ են սպասում օրէցօր:

\*) Զինու:

Արի գարուն, զէհ, շուտ արի,  
 Արի լիքն ու բարի,  
 Ձին ձմեռայ էս ցրտերը  
 «Հալեցին» մեր սրտերը:

Ա Ղ Ա Ս Ի Ն Ա Չ Ա Կ Ե Ր Տ

Ես սրտով ուզում էի գրել-կարդալ սովորել. բայց լսել էի, որ աշակերտների հետ կուպիտ են վարում՝ դրա համար չէի ուզում ուսումնարան գնալ: Հօրեղբայրս ինձ մի կերպ հասցրեց ուսումնարան, թողեց ուսուցչի մօտ, իսկ ինքը գնաց: Ուսուցիչն ինձ տարաւ բազը: Այնտեղ խաղում էին իմ հասակիս շատ տղաներ և աղջիկներ: Նրանք ուրախ էին և ես սրտով ուզեցի նրանց հետ խաղալ: Ուսուցիչն ու վարժուհին էլ մեզ հետ խաղում էին և խաղեր սովորեցնում:

Երբ գանգը խփեցին՝ երեսաները թողին իրանց խաղը: Նրանք հանդարտ ներս գնացին: Ուսուցիչը ինձ տարաւ դասարան: Այնտեղ տղաներն և աղջիկները խառը նստել էին նստարանների վրայ: Ուսուցիչը ներս մտնելուն պէս՝ բոլորն էլ կանգնեցին: Աղօթք ասելուց յետոյ նորից նստեցին և դասը սկսեց: Ուսուցիչը պատմում էր հէքիաթներ, պատմութիւններ և հարցնում, իսկ մենք պատասխանում էինք: Բայց ուսուցիչը խօսում էր շատ հանդարտ, հարցնում էր առանց բարկանալու, այնպէս որ ես միանգամից սիրեցի ուսումնարանը:

Երբ տուն վերադարձայ՝ իսկոյն վագեցի և ներողութիւն խնդրեցի հօրեղբօրից, որ հակառակում էի նրան և չէի ուզում ուսումնարան գնալ: Ես ինձ ներեց և ճաշից յետոյ միասին գնացինք՝ առանք ինձ համար դասագիրք, տետրակներ, թուղթ, մատիտներ, զրչակոթ, զրիչներ,

քանոն, թանաք, թանաքաման, ռետին, մի փոքրիկ զըրչահատ և ուրիշ ուսման պիտույքներ: Ես դարձայ ուսումնարանի աշակերտ և այն էլ խելօք աշակերտ:

Ա Ռ Ա Ծ Ն Ե Ր

Գուշտը քաղցածին մանր կը բըթի: Ով աշխատի, նա էլ կուտի: Ամառայ փուշը, ձմեռայ նուշը: Ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ՝ արծաթ է: Ծերանաս՝ ծերի պատիւն իմանաս: Հասկացողին մէկ ասա, չհասկացողին հս կաց, հա ասա: Տաշած քարը գետնին չի մնալ:

Մ Ե Ր Գ Ի Խ Ղ Ը

Աղասին արձակուրդին գնացել էր իրենց գիւղը: Երբ նա յետ դարձաւ քաղաք և գնաց ուսումնարան, ուսուցիչը հարցրեց նրան գիւղի մասին, իսկ Աղասին պատմեց հետեւեալը. —

Մեր գիւղը այստեղից մի օրւայ ճանապարհ հեռու է: Այնտեղ կայ քառասուն տուն ժողովուրդ. նրանք բոլորն էլ հայեր են: Մեր գիւղի տները գետնի մէջն են շինուած. լուսամուտներ չունեն. լոյսը մտնում է երդկից: Փողոցները ծուռն են, նեղ և կեղտոտ: Գիւղում կայ մի եկեղեցի: Ուսումնարան չրկայ և դրա համար մեր գիւղի մարդիկ գրել-կարդալ չըգիտեն:

Գիւղում խմում ենք աղբիւրի ջուր. աղբիւրներ շատ կան: Գիւղի մօտից հոսում է մի գետ, որի մօտ շինած է ջրաղացը: Պտղատու ծառեր չը կան: Ամառը մեր գիւղում հով է լինում, իսկ ձմեռը՝ ցուրտ:

### Ո Ր Բ Ի Ե Ր Գ Ը

Արև', արև', զո՛ւրս արի,  
Աչք ու ունքդ ինձ ցոյց տուր.  
Տրտից ջանս\*) զողում է,  
Ինչպէս ծիտն անփետուր:

Թէ հայր, թէ մայր ես չունեմ,  
Որք եմ թշւառ. ո՛ւր գնամ.  
Փող էլ չունիմ՝ փայտ առնեմ,  
Օջաղ վառեմ՝ տաքանամ:

Արև, արև, շո՛ւտ արա,  
Յուք-բօրանը\*\*) գալիս է.  
էս օր ցրտից որ մեռնեմ  
էլ արևըդ ընչիս է:

### Թ Ո Ի Խ Ս Ը

Գարունն էր. Մեր հաւերը կրկնալով ձու էին ածում:  
Նրանք առաւօտներն իմ քունը խանգարում էին. բայց  
ես ներում էի, որովհետև սիրում էի նրանց և շատ ան-  
գամ ինքս կուտ տալիս. նրանցից մէկը սկսեց կռթալ:  
Մայրս հասկացաւ, որ նա ուզում է թուխս նստել: Գոմում  
տեղ պատրաստեց քթոցի\*\*\*) միջին, մի քանի նոր ձա-  
ներ դրեց այնտեղ և այն կռթան հաւին նստեցրեց ձերի  
վրայ:

Հաւը ուռած, փքլած գիշեր, ցերեկ ձերի վրայից  
չէր հեռանում: Երբեմն նա իջնում էր քթոցից, մայրելիս

\*) Մարմինս:

\*\*) Մաստիկ ցուրտ:

\*\*\*) Կողով:

դրած կուտն ուտում, ջուրը խմում և էլի նորից բարձրա-  
նում՝ նստում ձերի վրայ:

Անցաւ երեք շաբաթ: Ձերից դուրս եկան փափիկ  
ձագեր: Նրանք իսկոյն ոտքի կանգնեցին, բայց քաղցից  
սրւտւում\*) էին: Մայրիկս կերակրում էր նրանց եփած  
ձող:

Մի քանի օրից յետոյ թուխսը գոմից դուրս տարաւ  
ձագերին բազն ու պարտէզը: Հարկաւոր էր նրանց մանա-  
ծել՝ որդեր, հատիկներ գտնել: Ահա նա բարձր կրխկած:  
Ձագերն իսկոյն վագեցին դէպի մայրը: Նա ցոյց տւեց  
իր գտած որդը, մաս-մաս արեց, տւեց նրանց՝ որ ուտեն  
և սովորեն՝ իրանք էլ որդեր գտնեն:

Թուխսը մտիկ էր տալիս շորս կողմը, որ չըլինի թէ  
չար փիշիկը կամ ուրուրը յանկարծ մօտենան և իր ձա-  
գերից փախցնեն: Փորձանքի ժամանակ բարձր ու երկար  
ձայնով իմաց էր տալիս ձագերին, որ իր մօտ շտապեն.  
իսկ ինքն առնում էր նրանց իր թևերի տակը:

Երեկոյեան թուխսը ձագերին կրկին տանում էր գոմը,  
հաւաքում նրանց իր թևերի տակը՝ քնացնում և ցրտից  
պահպանում:

Ամբողջ ամառը թուխսը պահեց իր ձագերին: Աշնանը  
նրանք արդէն մեծացել էին և կարողանում էին իրենց  
համար կերակուր գտնել: Թուխսը բաց թողեց նրանց:  
Մայրիկս շուկեց նրանցից աքլարիկներին վաճառեց, իսկ  
հաւիկներին պահեց, ամբողջ ձմեռը կերակրեց, նրանց հա-  
մար նոր տաք հաւաքուն շինել տւեց՝ մինչև որ հասաւ  
գարունը:

\*) Մըւծում:



### Ն Ա Ն Ի Ն Ի Է Ր Ն Ե Ր Ը

Թուխսն եկաւ կրքխկալէն,  
 Չագուկները՝ ծրւծրալէն.  
 Եկան նանի դուռը դառան,  
 Ժրւժընոցով գլուխ տարան:

Իսկ թոռները՝ տղայ, աղջիկ,  
 Թընդ-թընդում են խունջիկ-մունջիկ.  
 Որ նանն իրենց մէկ-մէկ ընծայ  
 Չագուկներից բռնի ու տայ:

«Տես, էն ճուտիկ՝ փափլիկ-թմփլիկ,  
 Քեզ եմ տալիս, սիրուն Սուրիկ.  
 Իսկ Դիսակին սպիտակ ձազը՝  
 էն կուարար գիժ որձակը:

«Չալիկ ճուտն էլ, էյ Գայեանէ,  
 Լաւ պահպանիր, էն քո փայն է.  
 Սևուկ-մևուկ աքլորիկն էլ՝  
 Թող Իսկուհուն լինի նւէր:

### Բ Ա Ր Ի Ե Ր Ե Ի Ա Ն Ե Ր

Փոքրիկ Նիկողայոսը և Մարիամը խաղում էին բազում: Բազը մտաւ մի նիհար, գունաթափ, աղքատ կին: Նա զրկած ունէր մի փոքրիկ աղջիկ և մի փոքրիկ տղայի ձեռքից էլ բռնել էր:

— Ինչո՞ւ գուք այդպէս նիհար էք և գունաթափ.— հարցրեց Նիկողայոսը:

— Մենք ունէինք տուն, կենդանիներ և ապրում էինք ուրախ: Բայց մէկ զիշեր կրակը մեր բոլոր կարողութիւնն այրեց՝ մոխիր դարձրեց, — ասեց աղքատ կինը և սկսեց

հեկեկալ: Նրա երեսաններն էլ լաց էին լինում:

— Գիտե՞ս ինչ, Նիկողայոս, — ասեց ցած ձայնով Մարիամը. արի մեր հաւաքած զրամներն տանք այս կնոջը. հայրիկն ու մայրիկն առնում են ամեն բան՝ ինչ որ մեզ հարկաւոր է լինում:

— Դու ինձանից լաւ մտածեցիր, Մարիամ. միայն հարկաւոր է հարցնել մայրիկին:

Մայրիկ, սիրելի մայրիկ, մեր զրամներն ուզում ենք տալ այս խեղճ կնոջը: Մենք կարող ենք այդ անել.— հարցրեց Նիկողայոսը:

— Ինչո՞ւ չէ. կարող էք. չէ որ զրամները ձերն են.— պատասխանեց մայրը:

Նիկողայոսը և Մարիամը վազեցին մանկանոցը, վերցրին այնտեղից իրենց բոլոր զրամները և բերին թափեցին աղքատ կնոջ գոգնոցի մէջ: — Վեր առ այդ զրամները և առ հազնելիքներ երեսաներիդ համար, — ասեց Նիկողայոսը:

Այդ ժամանակ Մարիամը մօտեցել էր մօրը և փըսփսում էր նրա ականջին.

— Սիրելի մայրիկ, գուցէ և դու մի բան աւելացնես. տեսնո՞ւմ ես՝ ինչպէս նրանք մերկ են և գունաթափ:

— Լաւ, սիրելի որդեակս, ես կըխօսեմ հայրիկիդ հետ և մենք կը մտածենք նրանց համար մի աւելի լաւ բան, — պատասխանեց մայրը:

### Մ Ա Ն Ո Ի Զ Ա Կ

Կապոյտ գլխով, կանաչ ոտով  
 Ես ծաղիկ եմ անուշ հոտով.  
 Թէև տունիս փոքրիկ է, ցած,

Արօտներում միշտ թագ կացած,  
 Բայց իմ փունջս ամենի տան,  
 Թէ աղքատի, թէ մեծատան,  
 Իբրև գարնան առաջին զարդ,  
 Գարէ տեսնել ամեն-մի մարդ.  
 Ես եմ սիրուն գարնան զուշակ,  
 Իմ անունս է մանուշակ:

Մ Ա Յ Ի Ս Ի Ն

Ինչքան լաւ է մայիս ամսում անտառի միջով անց-  
 նելը: Տես, սրբան թռչուններ կան: Ահա նրանք թռչկո-  
 տում են ծառից ծառ, երգում, ծըլլում են, միւսները  
 խոտ ու կաւ են կրում, բներ շինում: Նայիր մեղուններին.  
 տես՝ ինչպէս նրանք տրդտրդալով այս ու այն կողմն են  
 ընկել և ծաղիկներից իրենց մեղրի համար նիւթեր են  
 հաւաքում: Իսկ գոյնըգոյն թիթեռնիկներն այնքան շատ  
 են, որ նրանց համարել չի լինիլ:

Մ Ա Յ Ի Ս Ի Ն

Ժիր, ծիծաղկոտ մանուկի պէս՝  
 Արևն է միշտ ժպտերես.  
 Սար ու դաշտը կանաչազարդ,  
 Բացւել է և կարմիր վարդ:

Թռչունները՝ հազար ու բիւր  
 Չորս կողմից են եկել հիւր.  
 Թիթեռնիկներ, ճանճ ու բզէզ  
 Թռչկոտում են ուր կուզես:

Պարտէզների բոլոր ծառեր՝  
 Ծաղիկներ են բաց արել՝  
 Հուտով կըզայ քաղցրիկ ամառ՝  
 Միւրգ կը բերի մեզ համար:

Ղ Ե Ր Ե Մ Ե Ի Ս Ա Ր Դ

Փոքրիկ Սաթենիկը մօր հետ մտաւ շերամատուն:  
 Ահա տես, սիրունիկս, այս որդը բարձրացել է խոտի վրայ  
 և գործում է թելեր.—ասեց մայրը:

—Բայց ինչո՞ւ նա այնպէս ծանր է գործում, մայրիկ:

—ձիշտ է, նա գործում է ծանր, բայց գործած թե-  
 լը քնքոյշ է և ամուր: Նայիր վերև. ահա այնտեղ առաս-  
 տաղի վրայ՝ անկիւնումն, մի ուրիշ միջատ՝ սարդն է թե-  
 լեր գործում և շերամից աւելի արագ-արագ. բայց նրա  
 գործած թելիւրը մարդուս պէտք չեն:

—Մայրիկ, տես. ճանճն ընկաւ սարդի թելերի մէջ  
 և խեղճը չէ կարողանում գուրս գալ այնտեղից:

—Այո, հէնց դրան համար է գործել սարդը, որ ճանճեր  
 կամ ուրիշ միջատներ որսայ, նրանց արիւնը ծծի՝ կշտա-  
 նայ: Իսկ շերամի գործած թելերից մարդիկ պատրաստում  
 են մեզսքսէ թաշկինակներ, ժապաւէններ և հազնելիքներ:

Ճ Ա Ն Ճ

Փոքրիկ ճանճ եմ զւարճասէր,  
 Միշտ թռչում եմ վայր ու վեր,  
 Թէ հով տան մէջ, թէ բակում՝  
 Սաստիկ արևի տաքում:

Կեր ու խումից, խաղից ջոկ  
Իսկի շունիմ ուրիշ հոգ:

Օ Ձ Ը Ե Ի Մ Ո Ի Կ Ը

Ամառն էր: Ես նստել էի մեր այգու հնձանի դռանը: Այնտեղ մի կողմում կիտուած էին մեծ-մեծ քարեր: Յանկարծ այդ քարերի միջից դուրս վազեց մի մուկ. նա շալակել էր իր փոքրիկ ձագին: Նոյն տեղից դուրս սողաց և մի օձ, որ ընկել էր մկան յետեից: Մուկը վազեց դէպի պատը՝ գտաւ մի ծակ և մտաւ այնտեղ: Իսկ օձը կորցրեց մկան հետքը և թողեց՝ գնաց:

Այսպէս մուկն առանց շփոթելու ազատեց իրեն և իր գաւակին դօրեղ թշնամուց:

Ա Ն Ձ Ր Ե Ի

Անձրև', անձրև', ցանձ արի,  
Բըսցնւր ցորենն ու զարի.  
Բըսցնւր ծաղիկ, կանաչ խոտ,  
Ալէ՛ փոշի, մաքրէ՛ օդ:

Անձրև', անձրև', ցանձ արի,  
Գալըդ ամենիս բարի:

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Խ Ա Ղ

— Ե՛րբէք, եկէք «ուլերն ու գայլը» խաղանք. — ասեց հռիփսիմէն. — Ես ձեզ կը սովորեցնեմ այդ խաղը.

շնտ հեշտ է: Ա՛յ, լսեցէք. — Ես կը լինեմ այժը՝ ուլիկների մայրը. դուք՝ հայկ, Արամ, Աշխէն, Մարիամ, կը լինէք իմ ուլիկները. ազախնի սենեակը կը լինի մեր տնակը. իսկ Գարեգինը՝ գայլը: Գնու, Գարեգին պէտք է աշխատես խաբելով ներս մտնել մեր տնակը, երբ ես այնտեղ չը լինեմ. իսկ դուք ուլիկներ պէտք է չը խաբէք և ինչ խրատներ որ տամ ձեզ՝ լսէք և կատարէք: Հիմա Գարեգին, գնա մի տեղ թագ կաց: Գէհ, խաղը սկսուում է, լսեցէք:

— Ի՛մ ուլիկներ, խելօք գաւակներ, դուռը պինդ փակէք, հանգիստ կացէք և եթէ գրտից ուրիշ մարդ գալու լինի, դուռը բաց չանէք: Ես գնում եմ արածելու, ձեզ համար անուշ կաթ բերելու: —

— Չատ լաւ, մայր. գնա՛ և միամիտ մնա: Ասում են երեխէքը և դուռը պինդ փակում:

Հռիփսիմէն գնում է պարտէզ՝ իբր թէ արածում է և քիչ պտտելուց յետոյ գալիս՝ մատներով՝ իբր պողբերով դուռը բաղխում է և բարակ, քաղցր ձայնով մկրկում ու ասում.

Չալիկ-մալիկ ուլիկներ,  
Դուք իմ ազիզ գաւակներ.  
Ելէք, բացէք տան դուռը,  
Պատրաստ է ձեր ապուրը:

— Սա մեր մայրն է. լսում էք. բաց անենք դուռը. — Ասում են երեխաները և դուռը բաց անում:

Հռիփսիմէն մտնում է ներս. Երեխէքն ուրախանում են.  
— Մեր մայրն եկաւ, ջան-ջան. մեզ կաթը տուր, անուշ մայրիկ ջան. — ամեն կողմից թռչկոտում ու ուլի պէս մկրկում են երեխէքը և սկսում են իբր ծիծ ուտել:

— Հանդարտ, սիրելի գաւակներս, հանդարտ կերէք. շուտ-շուտ ուտելը վնաս է. — Քիչ հանգստանալուց յետոյ Հռիփսիմէն ասում է.

— Է՛հ, բաւական է, թողէք ինձ. ես էլի գնում եմ արածելու: — Ասում է ու գնում:

Քիչ յետոյ թագ կացած տեղից դուրս է գալիս Գարեգինը և կամաց-կամաց մտանում է ուլերի տնակին և ասում.

— Այժը դուրսն է. տեսնեմ՝ կարո՞ղ եմ խաբելով ներս մտնել տնակը և ուլիկներին ուտել: Ես գիտեմ՝ լսել եմ, թէ ինչ խօսքերով է մայրը կանչում ուլիկներին՝ դուռը բաց անելու ժամանակ: — Ասում է և սկսում է դուռը թաթով բաղխել:

— Ո՞վ է. — Չայն են տալիս ներսից երեխաները: Գարեգինը կանչում է.

Չալիկ-մալիկ ուլիկներ,  
Գուք իմ ազիզ զաւակներ.  
Ելէք, բացէք տան դուռը,  
Պատրաստ է ձեր ապուրը:

— Սա մեր մօր ձայնը չէ. լսում էք. սա ուրիշ մարդ է: Է՛յ, դու ո՞վ ես. ի՞նչ ես ուզում. — ձայն են տալիս երեխաները:

— Ես ձեր մայրն եմ, արածելուց եմ գալիս. բաց արէք դուռը, ձեզ համար անուշ կաթն եմ բերել. — պատասխանում է Գարեգինը:

— Գու մեր մայրը չես. գնա՛, հեռացիր այդ տեղից: Մեր մայրը բարակ և քաղցր ձայն ունի, դուռն էլ պողկերով է ծեծում: Ի՞զուր մի կանգնիր: — Ասում են երեխէքը և դուռը բաց չեն անում:

— Սրանք դուռը բաց անողը չեն. լաւն այն է, թողնեմ՝ հեռանամ, քանի որ շների աչքովն էլ չեմ ընկել: — Ասում է Գարեգինը և կամաց-կամաց հեռանում:

Յետոյ գալիս է Հռիփսիմէն: Երեխէքը շրջապատում են նրան. — Մայր, սիրելի մայր. գիտես ինչ պատահեց: Երբ դու գնացիր արածելու, մէկն եկաւ՝ բո խօսքերով

մեզ կանչեց, որ դուռը բաց անենք: Բայց նրա ձայնը հաստ էր և խապոտ, դուռն էլ թաթով էր բաղխում: Մենք հասկացանք, որ դու չես և դուռը բաց չարինք: —

— Չա՛տ լաւ էք արել, սրգիք, որ իմ խրատը լսել էք և դուռը բաց չէք արել: Նա դայլն է եղել. իմացել է, որ ես տանը չեմ, եկել է, որ ներս մտնի և ձեզ ուտի, — ասեց Հռիփսիմէն և սկսեց մէկ-մէկ նրանց համբուրել և ծիծ տալ:

Փ Ո Ք Ր Ա Տ Ա Ռ Ե Ր

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ  
հ ձ ղ ճ մ յ ն շ ո չ պ ջ ո ս վ  
տ ր ց ւ փ բ և օ ֆ  
այ ոյ ու իւ եա եօ

Գ Լ Խ Ա Տ Ա Ռ Ե Ր

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Զ  
Ղ Ը Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր Յ Ի Փ  
Ք Օ Ֆ

ա բ գ դ ե զ է ը թ  
ժ ի լ խ ծ կ ե յ ո ս

b d' j u z n y u o

n u y m p y l ph

f h o p uy ny ni

pu hu ho

W f g n s y b p

p f h L hu d y

L g b d' z h L W

I W g h u y W

p y h ph f o f

<< Ազգային գրադարան  
NL0247542

4698